Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N **23.6/[27355]-09**

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-ԻՆ ԺԱՄԸ 12:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ

Տ. Սարգսյան	ՀՀ վարչապետ (խորհդրի նախագահ)
Ն. Երիցյան	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Գ. Սարգսյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Տ. Դավթյան	ՀՀ ֆինանսների նախարար
Գ. Դանիելյան	ՀՀ արդարադատության նախարար
Ե. Զախարյան	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ
Հ. Բեգլարյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ
Մ. Թումասյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ (խորհրդի քարտուղար)

Հրավիրվածներ

Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Ա. Բախշյան	ՀՀ տարածքային կառավարման նախարարի տեղակալ
Ս. Ղոնաղչյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագի-տական վարչության պետ
Ռ. Վարդանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագի-տական վարչության գլխավոր մասնագետ
Է. Ավետյան	ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական կառավարման կենտրոն» պետական հիմնարկի տնօրեն
Կ. Գասպարյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության բաժնի պետ

1. Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի առաջին փուլի մանրամասն ինժեներական նախագծի պատրաստման նպատակով խորհրդատվական ընկերության և ճանապարհային ծածկի միջազգային մասնագետի ընտրության մրցույթների գնահատման հանձնաժողովի կազմի հաստատում

(Ն. Երիցյան , Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց հաստատել Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի առաջին փուլի մանրամասն ինժեներական նախագծի պատրաստման նպատակով խորհրդատվական ընկերության և ճանապարհային ծածկի միջազգային մասնագետի ընտրության մրցույթների գնահատման հանձնաժողովի կազմը։

2. Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի կառավարման մոդելի առաջարկների ներկայացում

(Ն. Երիցյան, Գ. Սարգսյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հանձնարարել ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Գ.Սարգսյանին՝

ա. շարունակել «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ-ի ընթացիկ գործունեությունը՝ միաժամանակ իրականացնելով անհրաժեշտ բարեփոխումներ,

բ. Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիրն իրականացնել ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության «Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի բազայի հիման վրա ստեղծվելիք նոր կազմակերպության՝ ԾԻԿ-ի միջոցով, որը հաշվետու կլինի Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի կառավարման խորհրդին,

գ. ԾԻԿ-ի ամբողջ անձնակազմը համալրել մրցութային կարգով,

դ. առաջիկա Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի կառավարման խորհրդի նիստի քննարկմանը ներկայացնել «Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի վերակառուցման և ԾԻԿ-ի հիմնադրման վերաբերյալ առաջարկություն.

2) հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանին՝ Համաշխարհային բանկի և Ասիական զարգացման բանկի համապատասխան ներկայացուցիչների հետ համատեղ քննարկել ընդունելի համարված կառավարման մոդելը և արդյունքների մասին զեկուցել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին.

3) ընդունել ի գիտություն ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից առաջարկված մոդելում ներկայացված հաստիքացուցակի և ծախսերի նախահաշվի նախագծերը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ
(ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ) Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Մ. ԹՈՒՄԱՍՅԱՆ